ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4456-Ա «10» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՄԻԿՈՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.13 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԴԱՇՏԱՅԻՆ ԽԱՏՈՒՏԻԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 28.08.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից 28.07.2026թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից 02.08.2022թ. տրված տեղեկանքը, «ԴԱՇՏԱՅԻՆ ԽԱՏՈՒՏԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (10.06.2026թ. հ.Դ-59965-26, 28.07.2026թ. հ.Դ-79168-26), ինչպես նաև հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետի 2024 թվականի հուլիսի 8-ի «Երևան, Նոր Նորք, Միկոյան փողոց հ.13 հասցեում՝ սեփականության իրավունքով «ԴԱՇՏԱՅԻՆ ԽԱՏՈՒՏԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» հ.2530-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված 60-օրյա ժամկետում օրինականացման վճարը չվճարելու հետևանքով Որոշումն՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի, համարվել է ուժը կորցրած.

1. Երևան, Նոր Նորք, Միկոյան փողոց հ.13 հասցեում՝ սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03122021-01-0162 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.202225BEHN) «ԴԱՇՏԱՅԻՆ ԽԱՏՈՒՏԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գրանցման համարը 290.040.00890 տրված 08.09.1995թ.) պատկանող հողամասում

ինքնակամ իրականացրած 129.4 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական (արտադրամաս՝ 41.2 քառ.մետր, ծածկեր՝ 61.3 քառ.մետր, պահակակետ՝ 19.6 քառ.մետր, պարիսպ՝ 7.3 քառ.մետր) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 731951 (յոթ հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ